

Հավելված 1
«Պարզեցված հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի

Հայտարարագիր (պարզեցված հարկ վճարող համարվելու համար)	Փաստաթղթի հերթական համարը (լրացվում է հարկային մարմնի կողմից)
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	
2. Անհատ ձեռնարկատերի անուն, ազգանունը	3. Իրավաբանական անձի անվանումը
4. Հասցե	5. Հեռախոսի համարը

Գործունեության տեսակ	Նշում
6. Պարզեցված հարկով հարկվող գործունեության բոլոր տեսակներով	
7. Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն	
8. Վարձակալության մասով	
9. Այլ գործունեության մասով	
10. Նոտարական գործունեության մասով	

Սույնով հայտարարում եմ, որ:

ա) սույն հայտարարագրի 7,8 եւ 9-րդ տողերում նշված գործունեության մասով նախորդ տարում մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության (առանց ԱԱՀ-ի) ընդհանուր գումարը (այդ թվում պարզեցված հարկով հարկվող, հաստատագրված վճարով հարկվող) չի գերազանցում 50,0 մլն. դրամը

բ) սույն տարվա հունվարի 1-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները (այդ թվում տույժերը և տուգանքները) կազմում են 100,0 հազ. դրամից պակաս գումար

գ) նախորդ տարում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների (որոնց համար նախատեսված չէ ավելացված արժեքի հարկի գանձում ներմուծման պահին) չիրացված՝ մաքսային արժեքով հաշվարկված մնացորդը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ չի գերազանցում 1,0 մլն. դրամը

դ) չեմ հանդիսանում ակցիզային հարկով (դրա փոխարեն՝ հաստատագրված վճարով) հարկվող ապրանքներ արտադրող

ե) չեմ հանդիսանում բանկ, գրավատուն, վարկային կամ ապահովագրական կազմակերպություն, ներդրումային հիմնադրամ, արժեթղթերի շուկայում մասնագիտացված մասնակից, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպիչ,

զ) սույն հայտարարագրի 7,8 եւ 9-րդ տողերում նշված գործունեության մասով չեմ իրականացնում իրավունքի, հաշվապահական հաշվառման եւ աուդիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության եւ կառավարման հարցերով խորհրդատվություն

է) չեմ հանդիսանում գյուղատնտեսական արտադրանք արտադրող

Տեղյակ եմ սույն հայտարարագրի մեջ տրվող ոչ ճիշտ տեղեկությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությանը

Հարկ վճարողի (պատասխանատու անձի) ստորագրություն	Հարկ վճարողի կնիքը	Տարածքային հարկային տեսչության պետ՝ Տեսուչ՝
---	--------------------	--

Հայտարարագրի ներկայացման ժամկետը
« ____ » _____ 200__թ.

Հայտարարագիրը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկ վճարողի հաշվառման (գրանցման) վայրի ՏՀՏ: ՏՀՏ-ի կողմից գրանցելուց հետո 1 օրինակը հանձնվում է հարկ վճարողին: